



**ՀՖՖ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ  
ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
մրցաշրջան 2020-2021թթ.**



ՀՖՖ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
ՄՐՑԱՇՐՋԱՆ 2020/2021թթ.





**Բովանդակություն**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....4

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....6

    Հոդված 1. Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները ..... 6

    Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները ..... 6

    Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը ..... 6

    Հոդված 4. ՀՖՖ գործառույթները..... 7

    Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները..... 7

    Հոդված 6. Մրցումներին մասնակցելու չափանիշները..... 8

    Հոդված 7. Մրցումներին մասնակցության համար դիմելու կարգը..... 8

    Հոդված 8. Պարգևատրումը..... 9

ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ.....10

    Հոդված 9. Մրցումների վայրը.....10

    Հոդված 10. Մրցումների անցկացման կարգը..... 11

    Հոդված 11. Խաղի անցկացման կարգը ..... 12

    Հոդված 12. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը ..... 12

    Հոդված 13. Խաղացանկը և անցկացման ժամկետները ..... 13

    Հոդված 14. Չկայացած և անավարտ խաղերը ..... 13

    Հոդված 15. Չկայացած և անավարտ խաղերը ..... 14

    Հոդված 16. Վիճարկումը ..... 14

ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ..... 15

    Հոդված 17. Սպասարկող անձնակազմի նշանակումը..... 15

    Հոդված 18. Սպասարկման իրականացումը..... 16

    Հոդված 19. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները..... 16

    Հոդված 20. Սպասարկող անձնակազմի վարձատրությունը..... 17

ԳԼՈՒԽ 4: ԴԱՇՏԻ ՏԵՐ ԱԿՈՒՄԲԸ..... 17

    Հոդված 21. Դաշտի տեր ակումբի պարտականությունները ..... 17

ԳԼՈՒԽ 5: ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ..... 18

    Հոդված 22. Նախախաղային խորհրդակցությունը ..... 18

    Հոդված 23. Առանձնահատկություններ՝ կախված եղանակային պայմաններից ..... 18

ԳԼՈՒԽ 6: ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ..... 18



Հոդված 24. Ֆուտբոլիստների հայտավորումը և վերահայտավորումը .....18

Հոդված 25. Ֆուտբոլիստների բժշկական ստուգումը..... 20

ԳԼՈՒԽ 7: ՖՈՒՏԲՈՒԼԻ ՍԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ .....20

Հոդված 26. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների մասնակցությունը ..... 20

Հոդված 27. Խաղի արձանագրություն.....21

Հոդված 28. Ֆուտբոլիստների փոխարինումները ..... 22

ԳԼՈՒԽ 8: ՄԱՐԶԱՀԱԳՈՒՄՏԸ .....23

Հոդված 29. Խաղահամարները..... 23

Հոդված 30. Խաղի մարզահագուստների հաստատումը ..... 23

ԳԼՈՒԽ 9: ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....24

Հոդված 31. Պայմանագրի գրանցումը ..... 24

Հոդված 32. Վեճերի քննարկումը ..... 24

Հոդված 33. Ակումբի (թիմի) անվանափոխությունը ..... 24

Հոդված 34. Իրավահաջորդությունը..... 24

Հոդված 35. Թիմերի մասնակցությունը Եվրագավաթներին ..... 25

Հոդված 36. Այլ հարցեր..... 25

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈՒԼԻ 2020-2021ԹԹ. ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ .....27



**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

<b>ՀՖՖ</b>	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
<b>ՖԻՖԱ</b>	Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա
<b>ՈՒԵՖԱ</b>	Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն
<b>ԲԽ</b>	Կանանց ֆուտբոլի Բարձրագույն խումբ
<b>ԱԽ</b>	Կանանց ֆուտբոլի Առաջին խումբ
<b>ԳԽ</b>	Գավաթի խաղարկություն
<b>ՀՖՖ գործադիր կոմիտե</b>	ՀՖՖ-ի կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման մարմին:
<b>Ակումբ</b>	Մարզական առումով ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնակարգերին և սահմանված նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցաշարերին կամ դրանց տարատեսակներին:
<b>Առաջնություն</b>	Տվյալ մրցաշրջանի ընթացքում ՀՀ կանանց ֆուտբոլի թիմերի միջև անցկացվող առաջնություն:
<b>Պաշտոնական խաղեր</b>	Կազմակերպված ֆուտբոլի շրջանակներում անցկացվող խաղեր՝ ազգային առաջնությունների, գավաթի խաղարկության, միջազգային ակումբային մրցաշարերի հանդիպումներ:
<b>Մրցումներ</b>	ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող Կանանց ֆուտբոլի մրցումներ:
<b>Ֆուտբոլային սուբյեկտներ</b>	Կանանց ֆուտբոլում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձինք:
<b>Տեսուչ</b>	ՀՖՖ-ի՝ մրցավարի, մրցավարի օգնականների գործողությունները գնահատող ներկայացուցիչ:
<b>Մրցավար</b>	Խաղի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված մրցավար:
<b>Մրցավարի օգնական</b>	Խաղի մրցավարի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված օգնական:
<b>Չորրորդ պաշտոնյա</b>	Խաղի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված չորրորդ պաշտոնյա:
<b>Պաշտոնյա</b>	ՀՖՖ-ի լիազորված հաստիքային աշխատակից, պատվիրակ, տեսուչ, հանձնակատար, կոմիտեի անդամ, հանձնաժողովների և/կամ ՀՖՖ-ի այլ իրավասու մարմինների անդամ:



<b>Ակումբի պաշտոնյա</b>	Ակումբի հաստիքային աշխատակից, այդ թվում՝ մարզչական, տեխնիկական և ղեկավար անձնակազմի անդամ, որը հայտավորված է ՀՖՖ մրցումներին մասնակցելու նպատակով:
<b>Խաղի կանոններ Մրցաշրջան</b>	Ֆուտբոլ խաղի գործող կանոններ Ժամանակաշրջան, որը մեկնարկում է յուրաքանչյուր օրացուցային տարվա օգոստոսի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին:
<b>Խաղաշրջան</b>	Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով մեկնարկող և վերջին պաշտոնական խաղով ավարտվող ժամանակաշրջան:
<b>Համապատասխանելիության հավաստագիր</b>	«ՀՖՖ ենթակառուցվածքային կանոնակարգի» չափանիշների համաձայն ՀՖՖ-ի կողմից տրվող փաստաթուղթ:
<b>Մարզադաշտ</b>	ՀՖՖ-ի կողմից համապատասխանելիության հավաստագիր ստացած մարզական շինություն, որտեղ անցկացվում է ֆուտբոլային հանդիպումը:
<b>Հանդիպման մասնակից</b>	Ֆուտբոլիստ, ակումբի պաշտոնյա, հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար:
<b>Արտակարգ իրավիճակ/ Ֆորս-մաժոր</b>	Արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են ֆուտբոլային հանդիպման՝ պատշաճ և ըստ նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացմանը:
<b>Ֆուտբոլիստ (խաղացող)</b>	Միրողական կամ պրոֆեսիանալ կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստ, որը հայտավորված է տվյալ առաջնությանը մասնակցության նպատակով:
<b>Խաղի ժամանակահատված</b>	Խաղից 1 ժամ առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից 1 ժամ հետո ընկած ժամանակահատված:



## ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 1. Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները

1.01 Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող կանանց ֆուտբոլի մրցումների կազմակերպման և անցկացման սկզբունքները, ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և այլ ընթացակարգային հարցերը տվյալ մրցումների ընթացքում, կարգավորում է կանանց ֆուտբոլի, մրցումներին մասնակցող ակումբների իրավունքներն ու պարտականությունները:

1.02 Կանոնակարգի խնդիրներն են՝

- ա) Մրցումների կազմակերպման, անցկացման, դեկլարման և հսկողության ընթացակարգերի սահմանումը,
- բ) Մրցումների մասնակիցների համար լիարժեք պայմանների ստեղծումը և ապահովումը,
- գ) մրցումների համակարգի համապատասխանեցումը ՀՖՖ-ի, ՌԻԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջներին:

### Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները

2.01 Մրցումների նպատակն է՝

- ա) ՀՀ տարածքում կանանց ֆուտբոլի հետագա զարգացմանը և մասսայականացմանը նպաստելը,
- բ) միջազգային մրցաշարերում Ազգային հավաքականների և ակումբային թիմերի հաջող ելույթներին նպաստելը,
- գ) ֆուտբոլիստների մասնագիտական որակների բարձրացմանը նպաստելը:

2.02 Մրցումների խնդիրներն են՝

- ա) Բարձրագույն խմբի թիմերի դասակարգումն՝ ըստ առաջնությունների արդյունքների,
- բ) Առաջին խմբի թիմերի դասակարգումն՝ ըստ առաջնությունների արդյունքների,
- գ) Մրցումների արդյունքներով գավաթակրի որոշումը,
- դ) Մրցաշրջանի մրցանակակիրների որոշումը հետևյալ դասակարգմամբ՝
  - Բարձրագույն խմբի առաջնության ռմբարկու,
  - Բարձրագույն խմբի առաջնության լավագույն ֆուտբոլիստ,
  - Առաջին խմբի առաջնության ռմբարկու:
  - Այլ մրցանակակիրներ:

### Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը



**3.01 Մրցումների բարեվարքային համակարգն ապահովելու նպատակով՝**

ա) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ցանկացած վերահսկողությունը կամ այլ կերպ դրսևորվորվող ազդեցությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող կանանց ֆուտբոլի մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբների նկատմամբ:

բ) արգելվում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող կանանց ֆուտբոլի մրցումներին մասնակից ակումբների և/կամ ֆուտբոլային բոլոր սուբյեկտների կողմից պայմանավորված խաղեր կազմակերպելը, կազմակերպման փորձ կատարելը կամ այդ արարքների մասին չհայտնելը:

---

**Հոդված 4. ՀՖՖ գործառույթները**

---

**4.01 ՀՖՖ-ն իրականացնում է մրցումների ընդհանուր ղեկավարումը, մասնավորապես՝**

- ա) հաստատում է մրցումների անցկացման կանոնակարգը և խաղացանկերը,
- բ) իրականացնում է թիմերի, դրանց ֆուտբոլիստների հայտավորման գործընթացը,
- գ) հաստատում է մրցումները սպասարկող մրցավարների և տեսուչների կազմը,
- դ) կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց նկատմամբ հսկողությունը,
- ե) ամփոփում է հանդիպումների արդյունքները,
- զ) հաստատում է առաջնությունների արդյունքները և իրականացնում մրցանակակիրների պարգևատրումը,
- է) իրականացնում է մրցումների կազմակերպումից բխող այլ անհրաժեշտ գործառույթներ:

---

**Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները**

---

**5.01 Մրցաշրջանի ընթացքում Ակումբները պարտավոր են՝**

- ա) անշեղորեն հետևել սույն և ՀՖՖ այլ կանոնակարգերի դրույթներին և կատարել ՀՖՖ Գործադիր կոմիտեի, ՀՖՖ վարչական անձնակազմի և ՀՖՖ այլ մարմինների կողմից ընդունված և պատշաճ կերպով ծանուցված որոշումները, շրջաբերականները (պատշաճ է համարվում առձեռն՝ ակումբի ղեկավար անձնակազմի համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությամբ, փոստով, ակումբի պաշտոնական էլեկտրոնային հասցեով կամ ՀՖՖ պաշտոնական վեբ կայքում ([www.ffa.am](http://www.ffa.am)) հրապարակման միջոցով ծանուցումը),
- բ) Տարեկան մեկ անգամ՝ մինչև տվյալ խաղաշրջանում տվյալ թիմի առաջին պաշտոնական խաղը, ապահովել ֆուտբոլիստների բժշկական հետազոտությունը





և արդյունքները ուղարկել ՀՖՖ Կանանց ֆուտբոլի բաժնի պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ [womens@ffa.am](mailto:womens@ffa.am):

**5.02** Ակումբները պարտասխանատու են՝

- ա) խաղերի արձանագրությունում նշված ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ խաղին մասնակցելու իրավասության առկայության համար. արձանագրությունում նշված լինելը համարվում է մասնակցություն խաղին,
- բ) խաղի ժամանակահատվածում և դրանից հետո իրենց ֆուտբոլիստների, վարչական անձնակազմի, ինչպես նաև իրենց երկրպագուների՝ ՀՖՖ կանոնակարգերով արգելված անօրինական, անթույլատրելի և անվայել գործողությունների համար,
- գ) մարզադաշտում գտնվող շինությունների, հանդերձարանների և այլ գույքի պատշաճ օգտագործման և դրա՝ մինչև օգտագործումն առկա վիճակի պահպանման համար,
- դ) ՀՖՖ-ին պաշտոնապես ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու համար:

**5.03** Ակումբներին արգելվում է՝

- ա) միջամտել խաղը սպասարկող անձնակազմի գործողություններին, այն է՝ դրսևորել այնպիսի գործունեություն կամ անգործություն, որը խոչնդոտում է կամ կարող է խոչնդոտել խաղը սպասարկող անձնակազմի բնականոն գործունեությանը կամ ազդում է կամ կարող է ազդել խաղի ընթացքի կամ ելքի վրա,
- բ) ներկայացնել ՀՖՖ-ն կամ օգտագործել ՀՖՖ-ի դրոշը և խորհրդանիշը (լոգո)՝ առանց ՀՖՖ-ի կողմից տրված գրավոր թույլտվության:

---

**Հոդված 6. Մրցումներին մասնակցելու չափանիշները**

---

**6.01** Մրցումներին կարող են մասնակցել այն ակումբները, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, ընդունում են ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար սկզբունքները, կանոնադրություններն ու կանոնակարգերը, ՀՖՖ-ի նկատմամբ չունեն չկատարված պարտավորություն(ներ), այդ թվում՝ չվճարված տուգանք և պարտավորվում են կատարել վերոնշյալ կազմակերպությունների, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջները:

---

**Հոդված 7. Մրցումներին մասնակցության համար դիմելու կարգը.**

---



- 7.01** Սույն կանոնակարգի 6-րդ հոդվածի համաձայն մրցումներին մասնակցելու իրավունք ունեցող ակումբը հաստատում է իր թիմի (թիմերի) մասնակցությունը Բարձրագույն և/կամ Առաջին խմբերի առաջնություններին և Գավաթի խաղարկությանը մինչև 2020 թ. օգոստոսի 16-ը՝ ՀՖՖ Կանանց ֆուտբոլի բաժին ներկայացնելով սահմանված կարգի «Մասնակցության Հավաստագիրը»:
- 7.02** Կանանց ֆուտբոլի 2020-2021 թթ. մրցաշրջանի մրցումներն ընդգրկում են՝
- ա) Բարձրագույն խմբի առաջնությունը,
  - բ) Առաջին խմբի առաջնությունը,
  - գ) Գավաթի խաղարկությունը,
- 7.03** Գավաթի խաղարկությանը մասնակցում են Բարձրագույն խմբի բոլոր թիմերը, ինչպես նաև Առաջին խմբում հանդես եկող այն թիմերը, որոնք ցանկություն կհայտնեն մասնակցելու Գավաթի խաղարկությանը:

---

#### **Հոդված 8. Պարգևատրումը**

---

- 8.01** Կանանց ֆուտբոլի Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնության ավարտից հետո ՀՖՖ-ն կազմակերպում և անցկացնում է պարգևատրման պաշտոնական արարողություն:
- 8.02** Մրցանակակիր ակումբներն մրցումների ավարտից երկու օր հետո ՀՖՖ են ներկայացնում պարգևատրման ենթակա անձանց ցուցակ:
- 8.03** Կանանց Բարձրագույն խմբի առաջնությունում առաջին տեղը զբաղեցրած թիմին շնորհվում է տվյալ մրցաշրջանի «Հայաստանի չեմպիոն» կոչումը, իսկ ակումբը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով՝
- ա) Բարձրագույն խմբի առաջնության գավաթ,
  - բ) ՀՖՖ դիպլոմ,
  - գ) 1,000,000 ՀՀ դրամ,
  - դ) 30 հատ ոսկե մեդալ և ՀՖՖ դիպլոմ ֆուտբոլիստների, պաշտոնյաների և ղեկավարների համար:
- 8.04** Կանանց Բարձրագույն խմբի առաջնությունում երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած յուրաքանչյուր թիմ, թիմերի ֆուտբոլիստները, պաշտոնյաները և ղեկավարները պարգևատրվում են 30-ական արծաթե և բրոնզե մեդալներով, ինչպես նաև ՀՖՖ դիպլոմներով:
- 8.05** Կանանց Առաջին խմբի առաջնությունում առաջին տեղը զբաղեցրած ակումբը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով՝
- ա) Առաջին խմբի առաջնության գավաթ,
  - բ) ՀՖՖ դիպլոմ,
  - գ) 200,000 ՀՀ դրամ,
  - դ) 25 հատ ոսկե մեդալ և ՀՖՖ դիպլոմ ֆուտբոլիստների, պաշտոնյաների և ղեկավարների համար:



- 8.06 Կանանց Առաջին խմբի առաջնությունում երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած յուրաքանչյուր թիմ, թիմերի ֆուտբոլիստները, պաշտոնյաները և ղեկավարները պարգևատրվում են 25-ական ՀՖՖ դիպլոմներով:
- 8.07 Գավաթի խաղարկության պարգևատրման արարողությունը անցկացվում է մարզադաշտում՝ եզրափակիչ խաղի ավարտից անմիջապես հետո:
- 8.08 Գավաթի խաղարկության եզրափակչում հաղթող թիմը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով՝
  - ա) Հայաստանի գավաթ,
  - բ) ՀՖՖ դիպլոմ,
  - գ) 30 հատ ոսկե մեդալ և ՀՖՖ դիպլոմ թիմի ֆուտբոլիստների, պաշտոնյաների և ղեկավարների համար:
- 8.09 Գավաթի խաղարկության եզրափակչում պարտվող թիմը, թիմի ֆուտբոլիստները, պաշտոնյաները և ղեկավարները պարգևատրվում են 30 հատ արծաթե մեդալներով և ՀՖՖ դիպլոմներով:
- 8.10 Գավաթի խաղարկության եզրափակիչ խաղը սպասարկող անձնակազմի անդամները պարգևատրվում են ՀՖՖ դիպլոմներով:
- 8.11 Կանանց Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների մրցաշրջանի լավագույն ուժերակուները պարգևատրվում են «ոսկե խաղակոշիկ» մրցանակով, ՀՖՖ դիպլոմով և 100,000-ական ՀՀ դրամով:
- 8.12 Բարձրագույն խմբի առաջնության լավագույն ֆուտբոլիստը որոշվում և հաստատվում է ՀՖՖ կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեի կողմից, հաշվարկելով մասնակից թիմերի մարզիչների կողմից ներկայացված ֆուտբոլիստների թեկնածուներին: Մարզիչները թեկնածուների ցուցակը առաջնության ավարտից 5 օր անց ուղարկում են ՀՖՖ-ի կանանց ֆուտբոլի բաժնի էլեկտրոնային հասցեին ([womens@ffa.am](mailto:womens@ffa.am)):
- 8.13 Բարձրագույն խմբի առաջնության լավագույն ֆուտբոլիստի մրցույթում առաջին տեղը զբաղեցրած ֆուտբոլիստը պարգևատրվում է «ոսկե գնդակ» մրցանակով, ՀՖՖ-ի դիպլոմով և 50 000 ՀՀ դրամով:
- 8.14 Մրցումների մասնակիցների համար ՀՖՖ նախագահի կամ Գործադիր կոմիտեի որոշմամբ կարող են սահմանվել այլ պարգևատրումներ:

## ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

### Հոդված 9. Մրցումների վայրը

- 9.01 Մրցումների մասնակից ակումբը մրցակցին ընդունում է «Մասնակցության հավաստագրում» նշված, սեփականության կամ օգտագործման իրավունքով իրեն պատկանող կամ վարձակալած հիմնական կամ պահեստային մարզադաշտում: Մարզադաշտը պետք է համապատասխանի ՀՖՖ ենթակառուցվածքային



կանոնակարգում ներկայացված մանկապատանեկան առաջնությունների համար սահմանված պահանջներին:

- 9.02 Յուրաքանչյուր հանդիպմանը տվյալ մարզադաշտի պատրաստ լինելը որոշում է խաղի մրցավարը՝ նախախաղային խորհրդակցության ժամանակ՝ հիմք ընդունելով ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգում ներկայացված մանկապատանեկան առաջնությունների համար սահմանված պահանջները:
- 9.03 Խաղի օրն առաջացած արտակարգ իրավիճակների/ֆորս-մաժորի, ինչպես նաև տվյալ հանդիպմանը մարզադաշտի՝ ցանկացած այլ պատճառով պատրաստ չլինելու դեպքում հանդիպման մրցավարը կայացնում է վերջնական որոշում խաղը տվյալ մարզադաշտում անցկացնելու կամ հետաձգելու վերաբերյալ՝ նախապես խորհրդակցելով ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ:
- 9.04 Մրցաշրջանի ընթացքում հիմնական մարզադաշտի՝ այս կամ այն պատճառով հանդիպումներն ընդունելու համար ոչ պիտանի դառնալու պարագայում, Կանանց ֆուտբոլի մրցումների շրջանակներում անցկացվող հանդիպումը կարող է տեղափոխվել մեկ այլ մարզադաշտ, եթե նախաձեռնող ակումբն այդ մասին հանդիպումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրավոր դիմել է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտ և ստացել համապատասխան թույլտվություն: Մարզադաշտի տեղափոխման նպատակահարմարությունը և դրա վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը:

---

**Հոդված 10. Մրցումների անցկացման կարգը**

---

- 10.01 Բարձրագույն խմբերի խաղերը անցկացվում են շրջանային մրցակարգով՝ 3 շրջանով: Թիմերը մրցում են մեկական անգամ սեփական և մրցակցի հարկի տակ: Երրորդ շրջանի հանդիպումները անցկացվում են առաջին շրջանի վիճակահանության արդյունքների համապատասխան:
- 10.02 Առաջին խմբերի խաղերը անցկացվում են շրջանային մրցակարգով՝ 4 շրջանով: Թիմերը մրցում են երկուական անգամ սեփական և մրցակցի հարկի տակ:
- 10.03 Գավաթի խաղարկությունն անց է կացվում օլիմպիական համակարգով (տե՛ս Հավելված 1):
- 10.04 Ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնություններում ստացած դեղին և կարմիր քարտերը, ինչպես նաև որակագրկումները չեն պահպանվում Գավաթի խաղարկության շրջանակներում և հակառակը՝ բացառությամբ ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված որակագրկումների:
- 10.05 Գավաթի խաղարկության շրջանակներում անցկացվող հանդիպումների կազմակերպման կարգի վրա տարածվում են Բարձրագույն խմբի առաջնության հանդիպումների կազմակերպման կանոնները, եթե այլ բան սահմանված չէ:



10.06 Գավաթի խաղարկությունն անցկացվում է սույն կանոնակարգի Հավելված 1-ում սահմանված «Հայաստանի Կանանց ֆուտբոլի 2020-2021թթ. մրցաշրջանի Գավաթի խաղարկության կանոնների» համաձայն:

---

**Հոդված 11. Խաղի անցկացման կարգը**

---

11.01 Սույն կանոնակարգով սահմանված Կանանց մրցումների շրջանակներում հանդիպումներն անցկացվում են՝ համաձայն ֆուտբոլ «Խաղի կանոնների» և սույն կանոնակարգի: Ըստ այդմ՝

- ա) Բարձրագույն խմբի խաղը բաղկացած է 45 րոպե տևողությամբ 2 խաղակեսից և խաղակեսերի միջև ընկած մինչև 15 րոպե ընդմիջումից,
- բ) Առաջին խմբի խաղը բաղկացած է 35 րոպե տևողությամբ 2 խաղակեսից և խաղակեսերի միջև ընկած մինչև 10 րոպե ընդմիջումից:

11.02 Գավաթի հանդիպումներն անց են կացվում Բարձրագույն խմբի հանդիպումների համար սահմանված տևողությամբ:

11.03 Բարձրագույն խմբի խաղերի սպասարկումն իրականացնում են ՀՖՏ մրցավարական և տեսչական բաժնի կողմից նշանակված մրցավարները:

11.04 Խաղը սկսելուց առաջ՝ համաձայն ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կողմից սահմանված ընդհանուր կարգի, թիմերի ֆուտբոլիստները և մրցավարները խաղադաշտում ողջունում են միմյանց և հանդիսականներին:

11.05 Բարձրագույն խմբի առաջնության խաղերում մրցակից յուրաքանչյուր ակումբ պարտավոր է ապահովել բժշկի ներկայությունը:

11.06 Առաջին խմբի առաջնության խաղերում դաշտի տեր ակումբը պարտավոր է ապահովել բժշկի ներկայությունը:

11.07 Հանդիպումներից առաջ կազմակերպվող միջազատումները և արարողությունները չպետք է ազդեն խաղի մեկնարկային ժամի և հետհաշվարկի վրա:

---

**Հոդված 12. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը**

---

12.01 Առաջնություններում թիմերը մրցաշարային աղյուսակում դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Յուրաքանչյուր խաղում հաղթանակի համար թիմին շնորհվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, իսկ պարտության դեպքում միավոր չի շնորհվում:

12.02 Մրցաշարային աղյուսակում երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունը, ըստ ստորև նշված հերթականության, տրվում է այն թիմին, որը՝

- ա) հավակնորդ թիմերի միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,



- բ) հավակնորդ թիմերի միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
- գ) հավակնորդ թիմերի միջև խաղերում խփել է ավելի շատ գնդակ,
- դ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,
- ե) տվյալ Առաջնության բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
- զ) տվյալ առաջնությունում ունի ավելի քիչ կարմիր քարտ,
- է) տվյալ առաջնությունում ունի ավելի քիչ դեղին քարտ,
- ը) վիճակահանությամբ:

---

**Հոդված 13. Խաղացանկը և անցկացման ժամկետները**

---

- 13.01** Խաղաշրջանը սկսելուց առնվազն 5 օր առաջ ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը հաստատում է մրցումների խաղացանկերը:
- 13.02** Բարձրագույն և Առաջին խմբերի խաղացանկերը կազմվում են Բերգերի համակարգով:
- 13.03** Թիմերի մեկնարկային դիրքը մրցաշարային աղյուսակում որոշվում է վիճակահանությամբ: Վիճակահանությունը կազմակերպվում է ՀՖՖ-ի Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից և անցկացվում է խաղաշրջանը սկսելուց առնվազն 10 օր առաջ:
- 13.04** Միևնույն թիմի երկու պաշտոնական խաղերի միջև ընկած ժամանակահատվածը պետք է լինի առնվազն 72 ժամ:
- 13.05** Առաջնության հաստատված խաղացանկում փոփոխությունները կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքում ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի որոշմամբ՝ տվյալ խաղին մրցող թիմերի գրությունների հիման վրա: Յուրաքանչյուր դեպքում վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը՝ ելնելով փոփոխության նպատակահարմարությունից:
- 13.06** Առաջնությունների անցկացման ժամկետները հետևյալն են.
  - ա) Բարձրագույն խումբ՝ 12.09.2020թ. – 31.05.2021թ.
  - բ) Առաջին խումբ՝ 19.09.2020թ. – 15.06.2021թ.
  - գ) Գավաթի խաղարկություն՝ 10.10.2020թ. – 15.05.2021թ.

---

**Հոդված 14. Չկայացած և անավարտ խաղերը**

---

- 14.01** Չկայացած կամ անավարտ են համարվում այն խաղերը, որոնք չեն կայացել կամ ընդհատվել են և չեն շարունակվել հետևյալ պատճառներից որևէ մեկի հիմքով՝
  - ա) եղանակային անբարենպաստ պայմանների,
  - բ) ֆորս-մաժորային իրավիճակի,



- զ) թիմի (թիմերի) խաղադաշտը լքելու,
- ը) երրորդ անձանց միջամտության դեպքում, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա:
- ե) թիմի ֆուտբոլիստի, պաշտոնյայի և/կամ երկրպագուի անկարգապահ վարքագիծ, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,
- զ) հասարակական կարգի այնպիսի խախտման դեպքում, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,
- է) թիմի կազմում 7-ից պակաս ֆուտբոլիստների առկայության դեպքում,
- ը) անկանխատեսելի հանգամանք, որն անհնար է դարձնում խաղի, մեկնարկը, դրա ընթացքը և/կամ շարունակությունը կամ ազդում է խաղի արդյունքի վրա:

**Հոդված 15. Չկայացած և անավարտ խաղերը**

- 15.01** Մասնակից թիմերը պարտավոր են ժամանել մարզադաշտ խաղի նշանակված ժամից նվազագույնը 60 րոպե առաջ:
- 15.02** Թիմը համարվում է խաղին չներկայացած, եթե մրցավարին չի տեղեկացրել ուշացման պատճառները և խաղասկզբին չի ներկայացել: Տեղեկացնելու դեպքում խաղասկիզբը կարող է հետաձգվել առավելագույնը 60 րոպեով, որի մասին որոշումը կայացնում է խաղի մրցավարը՝ խորհրդակցելով ՀՖՏ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ:
- 15.03** Եթե ՀՖՏ Կարգապահական կոմիտեի կողմից առաջնությունից հեռացված թիմը մասնակցել է 50% կամ պակաս խաղերի, ապա խաղերի արդյունքները չեղյալ են համարվում: Եթե թիմը մասնակցել է տվյալ առաջնության 50%-ից ավել խաղերի, ապա դրանց արդյունքները մնում են ուժի մեջ, իսկ այն թիմերին, որոնց հետ չեն կայանալու տվյալ առաջնության մնացած բոլոր հանդիպումները, գրանցվում է տեխնիկական հաղթանակ 0:3 հաշվով:
- 15.04** Սույն կանոնակարգի դրույթները պարբերաբար խախտելու, ՀՖՏ-ի որոշումները չկատարելու և իր գործողություններով կամ անգործությամբ ՀՖՏ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հիմնարար սկզբունքները ոտնահարելու դեպքում թիմը ՀՖՏ-ի Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշմամբ ՀՖՏ-ի Կարգապահական և Էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով կարող է հեռացվել տվյալ Առաջնությունից:

**Հոդված 16. Վիճարկումը**



- 16.01 Ակումբները կարող են վիճարկել «Ֆուտբոլ խաղի կանոնների» կամ սույն կանոնակարգի դրույթների այնպիսի խախտումը, որն ազդել է խաղի ելքի վրա:
- 16.02 Խախտման վիճարկումը գրանցելու համար ակումբի լիազորված անձը խաղից առավելագույնը 30 րոպե հետո պետք է պաշտոնապես դիմի խաղի մրցավարին և լրացնի խաղի արձանագրության համապատասխան բաժինը՝ ներկայացնելով վիճարկման հիմքերը, այն է՝ որ խախտումն է վիճարկվում, և ում կողմից է այն կատարվել: Խաղի մրցավարը վիճարկման մասին ծանուցում է մրցակից ակումբին ՀՖՖ պաշտոնական էլեկտրոնային հասցեի միջոցով:
- 16.03 Սույն հոդվածի 16.2 մասով սահմանված կարգով վիճարկումը գրանցելուց հետո ակումբը 24 ժամվա ընթացքում ՀՖՖ պաշտոնական էլեկտրոնային հասցեին է ներկայացնում տվյալ խախտման վերաբերյալ հիմնական վիճարկումը և վիճարկման տուրքի (այսուհետ՝ Տուրք) վճարումը հավաստող անդորրագիրը:
- 16.04 Տուրքը յուրաքանչյուր վիճարկվող խախտման համար կազմում է 10,000 ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՖՖ հաշվեհամարին՝ բանկային փոխանցման միջոցով:
- 16.05 Այն վիճարկման դիմումը, որը չի գրանցվել սույն հոդվածի 16.2 և 16.3 կետերին համապատասխան, թողնվում է առանց քննության:
- 16.06 Վիճարկումը քննարկվում է ՀՖՖ-ի համապատասխան մարմնի կողմից՝ էլեկտրոնային փոստի միջոցով վիճարկումը և Տուրքի անդորրագիրը ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում: Վիճարկման քննության արդյունքում ընդունվում է որոշում, որն էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է վիճարկումը ներկայացրած ակումբին և մրցակից ակումբին:
- 16.07 Յուրաքանչյուր խախտման մասով վիճարկումը ՀՖՖ-ի համապատասխան մարմնի կողմից բավարարելու դեպքում այդ խախտման համար վճարված Տուրքի գումարը՝ 10.000 ՀՀ դրամը, վերադարձվում է ակումբին:

### ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

#### Հոդված 17. Սպասարկող անձնակազմի նշանակումը

- 17.01 Հանդիպումը սպասարկող մրցավարական անձնակազմը և տեսուչը նշանակվում են ՀՖՖ-ի մրցավարական և տեսչական բաժնի կողմից:
- 17.02 Ակումբների կամ այլ կազմակերպությունների պահանջով կամ խնդրանքով սպասարկող անձնակազմի կամ վերջինիս առանձին անդամների նշանակում կամ փոխարինում չի կատարվում:





---

### Հոդված 18. Սպասարկման իրականացումը

---

- 18.01 Բարձրագույն խմբի առաջնության խաղերը կազմակերպելու և սպասարկելու համար ՀՖՖ-ն յուրաքանչյուր խաղից առաջ նշանակում է սպասարկող անձնակազմ հետևյալ կազմով՝ մրցավար, մրցավարի երկու օգնական: ՀՖՖ-ի որոշմամբ ԲԽ առաջնության խաղերը սպասարկելու համար կարող են նշանակվել տեսուչներ:
- 18.02 Առաջին խմբի առաջնության խաղերը կազմակերպելու և սպասարկելու համար ՀՖՖ-ն յուրաքանչյուր խաղից առաջ նշանակում է սպասարկող անձնակազմ հետևյալ կազմով՝ մրցավար, մրցավարի երկու օգնական:
- 18.03 Գավաթի խաղարկության խաղերը կազմակերպելու և սպասարկելու համար ՀՖՖ-ն նշանակում է սպասարկող անձնակազմ հետևյալ կազմով՝ մրցավար, մրցավարի երկու օգնական: Գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ հանդիպումները սպասարկելու համար ՀՖՖ-ն նշանակում է սպասարկող անձնակազմ՝ տեսուչ, մրցավար, մրցավարի երկու օգնական: Գավաթի եզրափակիչում ՀՖՖ-ն նշանակում է սպասարկող անձնակազմ՝ տեսուչ, մրցավար, մրցավարի երկու օգնական, 4-րդ պաշտոնյա:
- 18.04 Խաղերի սպասարկումն իրականացվում է համաձայն IFAB-ի կողմից ընդունված «Ֆուտբոլ խաղի կանոնների», ինչպես նաև ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի և ՀՖՖ-ի՝ պաշտոնական խաղերի անցկացումը կարգավորող այլ փաստաթղթերի:
- 18.05 Մրցավարների և տեսուչների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ֆուտբոլ «Խաղի կանոնների», սույն Կանոնակարգի դրույթների, մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող՝ ՀՖՖ այլ փաստաթղթերի համաձայն:

---

### Հոդված 19. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները

---

- 19.01 Սպասարկող անձնակազմի բոլոր անդամներին արգելվում է խաղին մեկնել և/կամ վերադառնալ տվյալ խաղի մասնակից ակումբներից որևէ մեկի հետ, և/կամ իջևանել միասին:
- 19.02 Մրցավարը պատասխանատու է արձանագրություններում նշված ֆուտբոլիստների ինքնության ստուգման և հաստատման համար:
- 19.03 Նախախաղային խորհրդակցությունից առաջ մրցավարը ստուգում է խաղադաշտի որակը և մարզադաշտի համապատասխանելիությունը ՀՖՖ ենթակառուցվածքային կանոնակարգին: Դաշտի որակի հետ կապված՝ խաղի անցկացման վերջնական որոշումը կայացնում է մրցավարը:
- 19.04 Մրցավարը խաղավարտից հետո առավելագույնը մեկ ժամվա ընթացքում ձևակերպում է խաղի արձանագրությունը և ուղարկում ՀՖՖ էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեին:



- 19.05 Տեսուչն իր զեկույցն ուղարկում է ՀՖՖ էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեին՝ մինչև խաղի հաջորդ օրը՝ ժամը 12:00-ն:
- 19.06 Սպասարկող անձնակազմը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ խաղն անցկացնելու համար:

---

#### **Հոդված 20. Սպասարկող անձնակազմի վարձատրությունը**

---

- 20.01 Մրցավարների և տեսուչների աշխատանքի և գործուղման վարձատրությունը կատարում է ՀՖՖ-ն:
- 20.02 Չկայացած և անավարտ խաղերի տեսուչի և մրցավարների աշխատանքի և գործուղման վարձատրությունը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

#### **ԳԼՈՒԽ 4: ԴԱՇՏԻ ՏԵՐ ԱԿՈՒՄԲԸ**

---

#### **Հոդված 21. Դաշտի տեր ակումբի պարտականությունները**

---

- 21.01 Դաշտի տեր ակումբը պարտավոր է.
- ա) առաջնության յուրաքանչյուր խաղի անցկացման համար տրամադրել առնվազն 3 գնդակ:
  - բ) տրամադրել մրցավարների համար նախատեսված հանդերձարան:
  - գ) խաղից մեկ օր առաջ հյուր թիմի պահանջով վերջինիս տրամադրել խաղադաշտ այն մարզադաշտում, որտեղ անցկացվելու է պաշտոնական հանդիպումը՝ առավելագույնը 60 րոպե տևողությամբ նախադային մարզում անցկացնելու նպատակով: Եղանակային անբարենպաստ պայմանների պարագայում հյուր թիմին կարող է տրամադրվել որակապես հավասարագոր այլընտրանքային խաղադաշտ:
  - դ) արգելել կողմնակի, որակագրկված անձանց մուտքը մրցավարական հանդերձարան:
  - ե) տրամադրել նախախաղային խորհրդակցության համար նախատեսված սենյակ:
  - զ) խաղի ժամանակահատվածում մարզադաշտում և դրա հարակից տարածքներում ապահովել հասարակական կարգի պահպանում ու հանդիպման մասնակիցների անվտանգությունը՝ ՀՀ ոստիկանության կամ անվտանգության աշխատակցի միջոցով: Անվտանգությունը չապահովելու դեպքում խաղը չի անցկացվում:
- 21.02 Սպասարկող անձնակազմին տրամադրել անհրաժեշտ քանակի գործարանային արտադրության ջուր:



### ԳԼՈՒԽ 5: ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

#### Հոդված 22. Նախախաղային խորհրդակցությունը

**22.01** Յուրաքանչյուր հանդիպումից առնվազն 45 րոպե առաջ մրցավարը կազմակերպում է նախախաղային խորհրդակցություն, որին մասնակցում են՝

- ա) ՀՀ ոստիկանության ներկայացուցիչը կամ անվտանգության աշխատակիցը
- բ) մրցող ակումբների ներկայացուցիչները,

**22.02** Ակումբների կողմից նախախաղային խորհրդակցությանը մասնակցող անձինք մրցավարի ստուգմանն են ներկայացնում ֆուտբոլիստների և դարպասապահի խաղային մարզահագուստն ամբողջությամբ՝ մարզաշապիկ, կիսավարտիք (կամ սպորտային տաբատ՝ դարպասապահի դեպքում), կիսագուլպա և մարզումային ժիլետներ: Հիմնական հանդերձանքից բացի պետք է ներկայացվեն նաև պաշտպանիչ դիմակներ, եթե դրանք օգտագործվելու են:

#### Հոդված 23. Առանձնահատկություններ՝ կախված եղանակային պայմաններից

**23.01** -15 աստիճանից ցածր և +40 աստիճանից բարձր եղանակային պայմանների պարագայում խաղի գլխավոր մրցավարը կայացնում է որոշում խաղի անցկացման անհնարավորության վերաբերյալ:

**23.02** +32 և բարձր ջերմաստիճանի դեպքում խաղի ժամանակ կիրառվում է երկու ջրային դադար մեկ րոպե տևողությամբ: Ջրային դադարի րոպեների վերաբերյալ որոշումը կայացնում է խաղի մրցավարը՝ նախաղային խորհրդակցության ժամանակ, որի մասին տեղյակ է պահում բոլոր շահագրգիռ կողմերին:

### ԳԼՈՒԽ 6: ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ

#### Հոդված 24. Ֆուտբոլիստների հայտավորումը և վերահայտավորումը

**24.01** Բարձրագույն խմբի մասնակից յուրաքանչյուր թիմի կազմում թույլատրվում է հայտավորել առավելագույնը 6 պաշտոնյայի և առավելագույնը 30 ֆուտբոլիստի: ԲԽ-ում թույլատրվում է հայտավորել 14 տարեկանը լրացած և բարձր ֆուտբոլիստների: ԲԽ-ում կարող է հայտավորվել նաև 5 օտարերկրացի:

**24.02** Առաջին խմբի մասնակից յուրաքանչյուր թիմի կազմում թույլատրվում է հայտավորել առավելագույնը 6 պաշտոնյայի և առավելագույնը 30 ֆուտբոլիստի: ԱԽ-ում թույլատրվում է հայտավորել 12-ից մինչև 16 տարեկան ֆուտբոլիստների (ծնվ.՝ 2004-2008թթ.): ՀՖՑ-ն բացառիկ իրավունքով Առաջին խմբում կարող է հայտավորել 16



տարեկանից բարձր 4 ֆուտբոլիստ ակումբի դիմումի հիման վրա: ԱԽ-ում կարող է հայտավորվել նաև 1 օտարերկրացի:

**24.03** Սույն կանոնակարգի շրջանակներում Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների քաղաքացիները չեն համարվում օտարերկրյա ֆուտբոլիստներ:

**24.04** Պաշտոնյաներ են համարվում հետևյալ անձինք՝

- ա) գլխավոր մարզիչ,
- բ) գլխավոր մարզչի օգնական,
- գ) դարպասապահների մարզիչ,
- դ) բժիշկ,
- ե) մերսող/ֆիզիոթերապևտ
- զ) ադմինիստրատոր,

**24.05** Հայտավորման պատուհանի բացման օրվանից սկսած մինչև տվյալ խաղաշրջանի ավարտը Բարձրագույն և Առաջին խմբի առաջնության մասնակից թիմի կազմում պետք է հայտավորված լինի նվազագույնը 20 ֆուտբոլիստ և 1 մարզիչ: Նշված ֆուտբոլիստների քանակների չապահովման դեպքում Ակումբը ենթարկվում է կարգապահական պատասխանատվության՝ ՀՖՖ-ի կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով:

**24.06** Հայտավորման և վերահայտավորման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) ակումբի ղեկավարի կողմից ստորագրված և կնքված հայտավորման/վերահայտավորման դիմում,
- բ) հայտավորվող/վերահայտավորվող յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար բուժհաստատության կողմից հաստատված տեղեկանք՝ ֆուտբոլիստի առողջական վիճակի մասին:

**24.07** Հայտավորման ժամկետը սահմանվում է պաշտոնական առաջին խաղից 15 օր առաջ և ավարտվում է 1 օր առաջ:

**24.08** Ֆուտբոլիստին կամ պաշտոնյային հայտից հանելը կատարվում է առաջնության ընթացքում՝ ակումբի ղեկավարի կողմից ստորագրված հայտից հանելու դիմումի համաձայն, որին անհրաժեշտ է կցել հայտից հանվող ֆուտբոլիստի/պաշտոնյայի անձնական քարտը:

**24.09** Թիմը կարող է հայտավորել կամ վերահայտավորել այն ֆուտբոլիստներին, որոնք գրանցված են տվյալ ակումբում: Ֆուտբոլիստների գրանցումը կատարվում է «ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգի համաձայն:

**24.10** Հայտավորման ժամկետի լրանալուց հետո ֆուտբոլիստների վերահայտավորումը թիմերում վերահայտավորումը կատարվում է սահմանված ժամկետներում՝ 12.09.2020-01.10.2020 և 15.01.2021- 28.02.2021թթ.:

**24.11** Հայտավորման ժամկետի լրանալուց հետո վերահայտավորվող յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար ակումբը վճարում է 1,000 ՀՀ դրամ:

**24.12** Պաշտոնյաները կարող են վերահայտավորվել առանց ժամկետային սահմանափակման:



**24.13** Խաղաշրջանի ընթացքում ֆուտբոլիստը կարող է տեղափոխվել մի ակումբից մյուսն ընդամենը մեկ անգամ: Վարձակալության ժամկետը լրանալուց հետո ֆուտբոլիստի վերադարձը մայր ակումբ տեղափոխություն չի համարվում: Տեղափոխություն է համարվում այն դեպքը, երբ ֆուտբոլիստը դուրս է գալիս նախորդ ակումբի գրանցումից և հայտից, ապա գրանցվում և վերահայտավորվում է նոր թիմի կազմում:

**Հոդված 25. Ֆուտբոլիստների բժշկական ստուգումը**

- 25.01** Տարեկան մեկ անգամ՝ մինչև տվյալ խաղաշրջանում տվյալ թիմի առաջին պաշտոնական խաղը, ապահովել ֆուտբոլիստների բժշկական հետազոտությունը:
- 25.02** Ֆուտբոլիստների բժշկական ստուգումն ապահովում են ակումբները՝ բուժհաստատության կողմից տրված համապատասխան ստուգման թերթիկի հիման վրա, որը պետք է լրացվի, ստորագրվի և կնքվի բժշկական հաստատության ներկայացուցչի կամ համապատասխան բժիշկների կողմից:
- 25.03** Ակումբը պարտավոր է լրացված բժշկական ստուգման թերթիկը ուղարկել ՀՖՖ Կանանց ֆուտբոլի բաժնի պաշտոնական էլեկտրոնային հասցեին [womens@ffa.am](mailto:womens@ffa.am):
- 25.04** Եթե ֆուտբոլիստը տվյալ մրցաշրջանում առաջնության որևէ ակումբի կազմում արդեն իսկ անցել է տվյալ ժամանակաշրջանի համար սահմանված բժշկական ստուգումը, ապա վերահայտավորվելու դեպքում կրկնակի բժշկական ստուգում չի պահանջվում, սակայն վերահայտավորող ակումբը պետք է վերահայտավորման դիմումին կից ՀՖՖ Կանանց ֆուտբոլի բաժին ներկայացնի տվյալ ֆուտբոլիստի բժշկական ստուգումը փաստաթուղթը:

**ԳԼՈՒԽ 7: ՖՈՒՏԲՈՒԼԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ**

**Հոդված 26. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների մասնակցությունը**

- 26.01** Ֆուտբոլիստները մրցումներին մասնակցում են ֆուտբոլիստի անձնագրով (բացառության կարգով՝ քաղաքացիական անձնագրով), իսկ պաշտոնյաները՝ մասնակցի քարտով, բացառությամբ՝ ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից տրամադրված հատուկ փաստաթղթով:
- 26.02** Մրցող թիմերի ներկայացուցիչները խաղասկզբից ոչ ուշ, քան 30 րոպե առաջ մրցավարին հանձնում են խաղի արձանագրությունը, որտեղ յուրաքանչյուր թիմում պետք է նշված լինեն թիմի առավելագույնը 23 ֆուտբոլիստների՝ ՀՖՖ-ի կողմից տրամադրված ֆուտբոլային անձնագրերի համարները, մարզաշապիկի համարները, անունները, ազգանունները, ինչպես նաև պաշտոնյաների՝ ՀՖՖ-ի կողմից տրամադրված քարտերի համարները, անունները և ազգանունները: Թիմի կազմը պետք է վավերացված լինի ակումբի իրավասու պաշտոնյայի կողմից:



Ֆուտբոլիստների անձնագրերը և պաշտոնյաների մասնակցի քարտերը խաղից հետո վերադարձվում են ակումբների ներկայացուցիչներին:

- 26.03** Խաղին կարող են մասնակցել միայն խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստները:
- 26.04** Խաղի արձանագրության մեջ լրացվում են այն ֆուտբոլիստների տվյալները, ովքեր հայտավորված են, ինչպես նաև որակագրված չեն մասնակցելու տվյալ խաղին:
- 26.05** Բարձրագույն խմբի առաջնության խաղերի արձանագրության մեջ նշվում է մինչև 23 (11 հիմնական և 12 փոխարինող (պահեստային) ֆուտբոլիստների տվյալներ:
- 26.06** Առաջին խմբի խաղերի արձանագրության մեջ նշվում է մինչև 23 (11 հիմնական և 12 փոխարինող (պահեստային) ֆուտբոլիստների տվյալներ: Առաջին խմբում պետք է նշել նվազագույնը 15 ֆուտբոլիստի տվյալներ (11 հիմնական և 4 փոխարինող (պահեստային), որոնցից միայն 2-ը կարող են լինել 16 տարեկանից բարձր ֆուտբոլիստներ:
- 26.07** Խաղի արձանագրության մեջ կարող է նշվել առավելագույնը 6 պաշտոնյա, որոնցից մեկը պետք է լինի թիմի բժիշկը:
- 26.08** Նույն առաջնությունում մարզիչները որպես ֆուտբոլիստ հանդես գալու իրավունք չունեն:
- 26.09** Խաղի ընթացքում տեխնիկական գոտում գտնվելու և պահեստայինների նստարանին նստելու իրավունք ունեն միայն խաղի արձանագրությունում նշված անձինք:
- 26.10** Բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմերի կազմում խաղին կարող են մասնակցել միևնույն ակումբի Առաջին խմբի առաջնության մասնակից թիմի ֆուտբոլիստները՝ առանց քանակային սահմանափակման՝ հաշվի առնելով 24.1 կետում նշված տարիքային սահմանափակումը:
- 26.11** Առաջին խմբի առաջնության մասնակից թիմերի կազմում միևնույն ակումբի Բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմի ֆուտբոլիստները չեն կարող ներառվել:

---

## **Հոդված 27. Խաղի արձանագրություն**

---

- 27.01** Յուրաքանչյուր խաղ պետք է ունենա արձանագրություն:
- 27.02** Արձանագրության առաջին մասը կազմվում է խաղին մասնակցող ակումբների կողմից: Յուրաքանչյուր ակումբ կազմում է արձանագրության իր հատվածը՝ դրանում լրացնելով խաղին մասնակցող հիմնական և փոխարինող (պահեստային) ֆուտբոլիստների անունները և ազգանունները, ՀՖՖ-ի կողմից տրամադրված՝ ֆուտբոլիստի անձնագրերի անձնական համարները, մարզաշապիկի համարները, ինչպես նաև պաշտոնյաների անունները, ազգանունները, ՀՖՖ-ի կողմից տրամադրված՝ պաշտոնյաների քարտերի անձնական համարները:
- 27.03** Արձանագրության մեջ կարող են նշվել միայն այն ֆուտբոլիստները և պաշտոնյաները, որոնք հայտավորված են և որակագրված չեն տվյալ խաղին



մասնակցելու համար: Չհայտավորված և որակագրված ֆուտբոլիստների խաղին մասնակցության պատասխանատվությունը կրում է տվյալ ակումբը:

**27.04** Մրցավարը խաղավարտից հետո առավելագույնը մեկ ժամվա ընթացքում կազմում է խաղի արձանագրությունը և էլեկտրոնային փոստով ուղարկում ՀՖՖ համապատասխան բաժնի պաշտոնական էլեկտրոնային հասցեին:

**Հոդված 28. Ֆուտբոլիստների փոխարինումները**

**28.01** Բարձրագույն խմբի առաջնության խաղերում թույլատրվում է կատարել առավելագույնը 5 փոխարինում:

**28.02** Առաջին խմբի առաջնության խաղերում թույլատրվում է կատարել առավելագույնը 7 փոխարինում, որոնցից 6-ը՝ պարտադիր՝ մեկը՝ դարպասապահ, ընդ որում՝ պարտադիր փոխարինվող յուրաքանչյուր ֆուտբոլիստ պետք է ստանա նվազագույնը 10 րոպե խաղաժամանակ:

**28.03** Խաղի ընթացքում պահեստային ֆուտբոլիստները կարող են լքել տեխնիկական գոտին միայն նախավարժանք կատարելու նպատակով: Նախախաղային խորհրդակցության ժամանակ մրցավարը որոշում է նախավարժանք անցկացնելու վայրը: Խաղի ընթացքում միաժամանակ նախավարժանք կարող են անցկացնել 3-5 պահեստային ֆուտբոլիստ:

**28.04** Խաղի հաստատված արձանագրությունը մրցավարին հանձնելուց հետո՝ մինչ խաղի սկզբնահարվածը, չի թույլատրվում կատարել փոփոխություններ՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

ա) եթե հիմնական կազմում արձանագրության մեջ նշված 11 ֆուտբոլիստներից որևէ մեկը ի վիճակի չէ սկսել խաղը անսպասելի ֆիզիկական անկարողության պատճառով, ապա նա կարող է փոխարինվել միայն արձանագրությունում նշված 12 փոխարինողներից ցանկացած մեկով: Համապատասխան փոխարինողը/ները կարող է/են փոխարինվել միայն հայտավորված ֆուտբոլիստներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում: Այս պարագայում փոխարինողների քանակը չի նվազեցվում և խաղի ընթացքում երեք խաղացողներ կարող են փոխարինվել:

բ) եթե խաղի արձանագրությունում նշված 12 փոխարինողներից որևէ մեկն անսպասելի ֆիզիկական անկարողության/վնասվածքի պատճառով ի վիճակի չէ մասնակցել խաղին, ապա նա/նրանք կարող է/են փոխարինվել միայն հայտավորված ֆուտբոլիստով/ներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում:

գ) եթե դարպասապահներից որևէ մեկն անսպասելի ֆիզիկական անկարողության/վնասվածքի պատճառով ի վիճակի չէ մասնակցել խաղին, ապա նա/նրանք կարող է/են փոխարինվել միայն հայտավորված



դարպասապահներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում:

**28.05** Վերը նշված դեպքերում՝ մինչև տվյալ խաղի ավարտը, ակումբը պարտավոր է խաղի մրցավարին ներկայացնել համապատասխան տեղեկանք՝ ստորագրված ակումբի բժշկի կողմից, որտեղ մանրամասն նկարագրված կլինի վնասվածքի բնույթը:

## ԳԼՈՒԽ 8: ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏԸ

### Հոդված 29. Խաղահամարները

- 29.01** Թիմերի մարզահագուստի մեջքի հատվածի կենտրոնական մասում պարտադիր պետք է փակցված լինեն ֆուտբոլիստների խաղահամարները:
- 29.02** Ֆուտբոլիստների խաղահամարները պետք է լինեն 1-ից մինչև 99-ի միջակայքում: Կարող են օգտագործվել միայն ամբողջական թվեր: 1-ին համարը պետք է գրանցված լինի թիմի դարպասապահի անվամբ:
- 29.03** Խաղահամարները պետք է հստակ ընթեռնելի լինեն ցերեկային լույսի և մարզադաշտի լուսավորության պայմաններում:

### Հոդված 30. Խաղի մարզահագուստների հաստատումը

- 30.01** Տնային կամ արտագնա մարզահագուստի փոփոխության վերաբերյալ անհրաժեշտ է ոչ ուշ քան 2 օր առաջ տեղեկացնել մրցակից ակումբին:
- 30.02** Առաջնության բոլոր խաղերի ժամանակ մարզահագուստի գույների համընկման պարագայում մարզահագուստը փոխում է հյուր թիմը: Հյուր թիմի մարզահագուստի փոփոխությունից հետո գույների համընկման պարագայում մարզահագուստը փոխում է դաշտի տեր թիմը: Յուրաքանչյուր պարագայում թիմերի մարզահագուստների գույները չպետք է համընկնեն իրար: Եթե մարզահագուստների գույները համընկնում են և թիմերը չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ գույների ընտրության հարցում, ապա վերջնական որոշումը կայացնում է խաղի մրցավարը:
- 30.03** Ֆուտբոլիստին արգելվում է խաղի ժամանակ կրել ցանկացած տիպի զարդ: Այն բացառիկ դեպքերում, երբ ֆուտբոլիստը կրում է որևէ զարդ, որն անհնար է հանել առանց ֆիզիկական ցավ պատճառելու, խաղի մրցավարի թույլտվությամբ վերջինս կարող է կրել այդ զարդը՝ բացառապես այն ծածկելու պարագայում:





## ԳԼՈՒԽ 9: ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

### Հոդված 31. Պայմանագրի գրանցումը

**31.01** Ֆուտբոլային սուբյեկտների միջև պայմանագրերը, պայմանագրերի փոփոխումը և լուծումը, ֆուտբոլիստների՝ ակումբից ակումբ տեղափոխումը կարգավորում է «ՀՖՖ ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգով:

### Հոդված 32. Վեճերի քննարկումը

**32.01** Ֆուտբոլային սուբյեկտների միջև ծագած վեճերը քննարկվում և վերջնական լուծում են ստանում ՀՖՖ-ում՝ համաձայն ՀՖՖ Կանոնադրության:

**32.02** Պայմանագրային հարաբերությունների հետ կապված վեճերը քննարկվում են միայն ՀՖՖ-ում գրանցում ստացած պայմանագրերի առկայության դեպքում: Պայմանագրի բացակայության դեպքում ֆուտբոլիստի այլ ակումբ տեղափոխվելը իրականացվում է ակումբի ղեկավարի կողմից ներկայացված՝ ֆուտբոլիստի՝ ակումբից դուրս գալու դիմումի հիման վրա կամ ակումբի և ֆուտբոլիստի անհամաձայնության դեպքում՝ ֆուտբոլիստի անձնական դիմումի հիման վրա:

**32.03** Մրցումների անցկացման հետ կապված այն իրավահարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն Կանոնակարգով, ենթակա են կարգավորման ՀՖՖ-ի, ՌԻԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի այլ փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ:

### Հոդված 33. Ակումբի (թիմի) անվանափոխությունը

**33.01** Ակումբի անվանափոխությունը կատարվում է ՀՀ օրենսդրության համաձայն: Ակումբը պարտավոր է մեկամսյա ժամկետում գրանցել անվանափոխությունը ՀՖՖ-ում՝ վճարելով՝ 30.000 դրամ:

**33.02** Թիմի անվանափոխությունը կատարվում է ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմումի հիման վրա՝ 30.000 դրամ բանկային փոխանցում կատարելուց հետո: Թիմի անվանափոխությունը հաստատում է ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեն:

**33.03** Անվանափոխության տարբերակները անհրաժեշտ է նախապես քննարկել և համաձայնեցնել ՀՖՖ-ի հետ:

### Հոդված 34. Իրավահաջորդությունը

**34.01** Իրավահաջորդությունը ակումբների վերակազմակերպման դեպքում կատարվում է ՀՀ օրենսդրության համաձայն:



**34.02** Վերակազմակերպման արդյունքում առաջացած ակումբները պարտավոր են ՀՖՏ ներկայացնել իրենց իրավահաջորդությունը հաստատող փաստաթղթեր, որից հետո նրանք կարող են իրավունք ստանալ մասնակցել ՀՖՏ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ մրցումներին:

---

**Հոդված 35. Թիմերի մասնակցությունը Եվրագավաթներին**

---

**35.01** Կանանց Բարձրագույն խմբի 2020-2021 թթ. խաղաշրջանի Չեմպիոն թիմն իրավունք է ստանում մասնակցելու ՈԻԵՖԱ-ի Չեմպիոնների Լիգայի (ՉԼ) 2021/2022 թթ. խաղարկությանը:

---

**Հոդված 36. Այլ հարցեր**

---

**36.01** Ֆուտբոլիստների կարգավիճակը և տեղափոխությունները կարգավորվում են «ՀՖՏ ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգով:

**36.02** Սույն Կանոնակարգի դրույթ/ներ/ի խախտումը (ոչ պատշաճ կատարումը) առաջացնում է «ՀՖՏ կարգապահական կանոնակարգով» նախատեսված պատժամիջոցներ և/կամ տուգանքներ:

**36.03** Մրցավարությունն ու տեսչությունը կոպիտ սխալներով անցկացնելու դեպքում սպասարկող անձնակազմի սխալ/ներ/ թույլ տված անդամների նկատմամբ կիրառվում են կարգապահական պատժամիջոցներ՝ համաձայն ՀՖՏ-ի՝ մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող փաստաթղթերի:



ՀՖՖ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԻ ԱՆՅԿԱՅՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
(ՄՐՅԱՇՐՋԱՆ 2020/2021)

Հաստատված է՝ ՀՖՖ Գործադիր  
Կոմիտեի կողմից թ-ին



## ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈՒԼ 2020-2021ԹԹ. ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Հայաստանի Կանանց ֆուտբոլի 2020-2021 մրցաշրջանի Գավաթի խաղարկությունն անցկացվում է օլիմպիական մրցակարգով:
2. Գավաթի խաղարկությունը սկսվում է 1/4 եզրափակչից, որին մասնակցում են Բարձրագույն խմբի թիմերը, ինչպես նաև Առաջին խմբում հանդես եկաղ այն թիմերը, որոնք ցանկություն կհայտնեն մասնակցելու Գավաթի խաղարկությանը: ԳԽ-ին կարող են մասնակցել հայտ ներկայացրած այն թիմերը, որոնք կհամապատասխանեն Առաջին խմբի առաջնությանը մասնակցելու նվազագույն պահանջներին: Նման թիմերի մասնակցության հաստատումը վերապահված է ՀՖՖ-ին:
3. Գավաթի խաղարկության մասնակից թիմերի դիրքերը խաղացանկում որոշվում են վիճակահանությամբ խաղարկությունը սկսվելուց 10 օր առաջ:
4. 1/4 և 1/2 եզրափակիչ փուլի խաղերի հաղթողները որոշվում են երկու խաղերի արդյունքներով՝ սեփական և մրցակցի դաշտերում: Երկու խաղերի արդյունքում հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է մրցակցի հարկի տակ ավելի շատ գոլ խփած թիմին, իսկ դրա հավասարության, ինչպես նաև եզրափակիչ խաղի արդյունքի հավասարության դեպքում հաղթող թիմը որոշվում է 11 մետրանոց հարվածաշարի միջոցով՝ ըստ ֆուտբոլ «Խաղի կանոնների»:
5. Գավաթի խաղարկության հանդիպումներին մասնակցած ֆուտբոլիստներին՝ այլ ակումբ տեղափոխվելու դեպքում, թույլատրվում է նոր թիմի կազմում մասնակցել 2020-2021թթ. մրցաշրջանի Գավաթի խաղարկության հաջորդող հանդիպումներին:
6. Գավաթի եզրափակիչ հանդիպման մարզադաշտը, անցկացման օրն ու ժամը որոշում է ՀՖՖ-ն: Մարզադաշտի ընտրության ժամանակ ՀՖՖ-ն պետք է բացառի հանդիպմանը մասնակցող թիմերը ներկայացնող քաղաքների մարզադաշտերը: «Դաշտի տեք» թիմը որոշվում է վիճակահանությամբ:



**ՀՖՖ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԻ ԱՆՅԿԱՑՄԱՆ (2020-2021 ՄՐՅԱՇՐՋԱՆ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ**

Էդգար Մանուկյան	ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի պետ
Աննա Թադևոսյան	Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեի նախագահ, ՀՖՖ Գործադիր կոմիտեի անդամ
Լիլիթ Սուրադյան	ՀՖՖ Կանանց ֆուտբոլի բաժնի պետ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ**  
**ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԲԱԺԻՆ**  
**ԽԱՆՁՅԱՆ ՓՈՂՈՅ 27**  
**ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ**  
**Հեռ. +374 11 88 88 08**  
**ԷԼ. ՓՈՍՏ. [COMPETITION@FFA.AM](mailto:COMPETITION@FFA.AM)**  
**[WWW.FFA.AM](http://WWW.FFA.AM)**

